ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2022 թվականի դեկտեմբերի 21-ի նիստի (հարցման կարգով)
N 3 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Լիանա Հայկազի Գրիգորյանի** և նույն ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր **Արմեն Գևորգի Ճուղուրյանի «Ֆինանսական վերլուծություն և որոշումների կայացում»** ուսումնական ձեռնարկի հրատարակությունը երաշխավորելու մասին հարցը:

Հրատարակության ներկայացված ուսումնական ձեռնարկն ունի կարևոր նշանակություն, որտեղ հեղինակները ֆինանսական վերլուծությունը դիտարկում են տնտեսական որոշումների կայացման համատեքստում: Մասնավորապես՝ ձեռնարկում ներկայացվում է ֆինանսական տեղեկատվության նշանակությունը ձեռնարկատիրական որոշումներ իրականացնելիս և նախանշվում են այն հիմնական ոլորտները, որտեղ ֆինանսական վերլուծությունը օժանդակում է մրցունակ և տեղին որոշումների կայացմանը: Ձեռնարկը հագեցած է իրավիճակային խնդիրներով և դրանց լուծումներով, որը նպաստում է ուսանողի մոտ ստեղծարար մտածողության զարգացմանը ձեռնարկատիրական որոշումներ կայացնելիս: Մանրամասն մեկնաբանվում է ֆինանսական վերլուծության եղանակների շրջանակը ինչպես տնտեսական գործունեության իրավիճակային, այնպես էլ գործոնային վերլուծության դաշտում և կոնկրետ օրինակներով ներկայացվում է դրա կիրառելիության հնարավորությունը ձեռնարկատիրական որոշումներ կայացնելիս:

Ուսումնական ձեռնարկի վերաբերյալ ստացվել է 4 դրական կարծիք.

1) Կառլեն Խաչատրյան՝ Երևանի պետական համալսարանի կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ:

2) Նարինե Կիրակոսյան՝ Հայաստանի եվրոպական համալսարանի կառավարման ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ:

3) Ն.Խաչատրյան՝ ՄՖԲ ֆինանսական ակադեմիայի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու:

4) Ա.Վ.Մաթևոսյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսների ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր:

Բոլոր կարծիքներում նշվում է, որ ուսումնառության գործընթացում ուսումնական ձեռնարկի օգտագործումը անվերապահորեն կընդլայնի տնտեսական գործունեության վերլուծության գործիքակազմի կիրառմամբ կառավարչական որոշումների կայացման ուսանողի հմտությունների և կարողությունների շրջանակը, ինչպես նաև կնպաստի վերլուծողի մտածելակերպի զարգացմանը: Այն արդիական է և օգտակար կլինի նաև բիզնես վերլուծությամբ հետաքրքրվող դասախոսների, հետազոտողների և կառավարիչների համար:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով գրախոսների դրական կարծիքները, կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի, հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի գիտական խորհրդի և համալսարանի գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի նիստերի որոշումները՝ կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Լիանա Հայկազի Գրիգորյանի** և նույն ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր **Արմեն Գևորգի Ճուղուրյանի «Ֆինանսական վերլուծություն և որոշումների կայացում» ուսումնական ձեռնարկը** երաշխավորել հրատարակության, 200 օրինակ տպաքանակով, «Տնտեսագետ» հրատարակչությունում (նախատեսված է հրատարակչական պլանով): Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն (կողմ՝ 56, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2022 թ. դեկտեմբերի 21
Երևան